ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՇՁԲ-10/2-1

ք.Երևան 10.07.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արալպլաստ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ալլավերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև **20.12.2019թ.**: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ պայմանագրին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր **առավելագույն** գինը կազմում է **100,000,000** (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որից **16,666,666.67** (տասնվեց միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ**, որտեղ՝

ՄԳ-ն Կապալառուի առաջարկած ընդհանուր գինն է որը կազմում է **3,282,000** (երեք միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՆԳ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի **«ԸՆԴԱՄԵՆԸ»**-ը տողում նշված գինն է, որը կազմում է **4,783,979** (չորս միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ԾԳՏ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի՝ ըստ առանձին տողերի համար սահմանված միավորի գինն է՝ գումարած ԱԱՀ-ն.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված՝ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի ծավալն է.

ՎԳՏ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Չեխովի 12Ա, բն. 31
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011117034	Հ/Հ 2474500282840010
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02240129
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ԴԱՎԹԱՐՅԱՆ	Ա. ԱԼԼԱՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՇՁԲ-10/2-1 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը և CPV կոդը	Հիմնա-վորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը, **հազար ՀՀ դրամ**
1	2	3	4	5	6
	Տանիքների վերանորոգման աշխատանքներ, CPV կոդ՝ 45261124/1		**Տանիքների վերանորոգման աշխատանքներ**		
			1.Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ		
1		Կ46-95	Տանիքի ծածկույթի քանդում գլանափափեթային նյութերից	100մ²	19.536
2		Կ46-96	Տանիքի ծածկույթի քանդում, թերթային պողպատից	100մ²	10.412
3		Կ46-98	Տանիքի ծածկույթի քանդում ալիքավոր և կիսաալիքավոր ասբոցեմենտե թերթերից	100մ²	21.757
4		Կ46-97	Տանիքի ծածկույթի քանդում ասբոցեմենտե սալերից և կոմինդրից	100մ²	64.992
5		Կ9-24 q=0,6; 0,7	Տանիքի ծածկույթի քանդում, ձևավոր թերթային պողպատից /մինչև 20մ բարձր./	100մ²	59.003
6		Կ10-196 կիրառ. q=0,8	Տանիքի փայտե տախտակամածի ապամոնտաժում	100մ²	34.125
7		Կ10-70 կիրառ. q=0,8	Տանիքի փայտե կառուցատարրերի ապամոնտաժում	մ³	26.624
8		8-187	Տանիքի կախովի թիթեղե ջրհորդանների, (նաև պատուհանագոգերի ջրթափիկների, լուսամուտների ջրապաշպան քիվերի, ձնապաշպան արգելքների) ապամոնտաժում /լայն. մինչև 0,4մ/	100մ	11.819
9		8-188	Տանիքի պատի թիթեղե ջրհորդանների (նաև պատուհանագոգերի ջրթափիկների, լուսամուտների ջրապաշպան քիվերի, ձնապաշպան արգելքների) ապամոնտաժում /լայն. մինչև 0,7մ/	100մ	26.335
10		8-188 Ծ. կետ 1	Հեենասանդուղքի վրա աշխատանքների կատարման դեպքում ավելացնել /ի լրումն 8-188 կետի/	100մ	3.919
11		Կ46-100	Բետոնե ծածկաշերտի քանդում	մ³	13.255

12		Կ46-95	Տանիքի ծածկույթի քանդում գլանափափեթային նյութերից	100մ²	19.536
13		8-186	Ջրհոս խողովակների ապամոնտաժում, ներառյալ իրենց ձևավոր մասերը	100մ	10.818
14		Կ46-(156-158) կիրառ	10-39մմ տրամագծով, 200մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկոնում կառուցատարրերում ալմաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	80.508
15		Կ46-(172-174) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 10-39մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	0.811
16		Կ46-(159-163) կիրառ	40-69մմ տրամագծով, 200մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկոնում ե/բետոնե կառուցատարրերում ալմաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	92.133
17		Կ46-177 կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել ամեն 10մմ խորության փոփոխման 40-69մմ տրամագծով անցքերի համար	100 հատ	2.895
18		շուկա	Ամբարձիչ մեքենայի, կռունկի ծառայություն	ժամ	5.11
19		23-77 23-226 գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 1կմ	տն	3.015
20		գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1կմ	տն	0.919
21		գն.3	Ավելացնել լրացուցիչ 1կմ տեղափոխման համար (միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ; Մ/արժեքx(n-1), որտեղ n-ը կուտակույտի բարձման տեղից մինչև թափոնատեղը ընկած տարածության երկարությունն է կմ-ով)	տն	0.17
22		Կ11-55;57; 67;69; 75; 79; 80 հաշվ. կիրառ	Հարթեցնող շերտի, բետոնե ծածկույթների պատրաստում ցեմենտային շաղախով, տարբեր դասի և տեսակի բետոններով 20մմ հաստ. առանց նյութերի արժեքի /խտացումով, ծախս՝ ցեմենտե շաղախ/բետոն/ (ծախսը՝ 2,2խմ)	100մ²	83.679
23		Կ11-56;58; 68; 70; 76; 81; 82 հաշվ. կիրառ	Ամեն հաջորդ ցեմենտե շաղախի, բետոնի շերտի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասեցնել առանց նյութի արժեքի /ծախս՝ ցեմենտե շաղախ/բետոն/ (ծախսը՝ 0,51խմ)	100մ²	10.106
24		Կ11-16 կիրառ	Ծածկերի ջրամեկուսացում /գոլոշամեկուսացում/, ջրամեկուսիչ շերտի իրականացում, 1 շերտ գլանափաթեթային/ծախսը՝ իզոգամ 112քմ, գազ 8-16կգ(ըստ փաստացի ծախսի)/ առանց նյութերի արժեքի	100մ²	92.899
25		Կ11-17 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկուսիչ շերտի համար ավելացնել, գլանափաթեթային /իզոգամ, ծախսը՝ 112քմգազ 8-16կգ(ըստ փաստացի ծախսի)/, առանց նյութերի արժեքի	100մ²	47.115
26		Կ11-47 կիրառ	Ծածկերի ջրամեկուսացում /գոլոշամեկուսացում/ ջրամեկուսիչ շերտի իրականացում մաստիկամով բիտումա-կաուչուկային, պոլիմեր-ցեմենտային և այլ հիմքերով մաստիկների քսումով /լցահարթեցումով/ 1շերտ առանց նյութի արժեքի /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի, առանց նյութերի արժեքի/	100մ²	56.112

27		Կ11-48 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկուսիչ մածկումով /լցահարթեցումով/ շերտի համար ավելացնել, առանց նյութի արժեքի	100մ²	15.625
28		Կ10-70	Տանիքի փայտե կառուցատարրերի /նաև կավարամածի/ իրականացում առանց նյութերի արժեքի /ծախս՝ փայտ՝ 1,05խմ; հականեխիչ մածիկ 1,96կգ; մեխ՝ 7,2կգ; տոլ/կամ իզոգամ/, 3,36քմ; մետաղյա գլոցվածք՝ 1,2կգ/	մ³	33.281
29		Կ9-24	Տանիքի ծածկույթի իրականա ցում ձևավոր ցին. թիթեղից, առանց նյութերի արժեքի /մինչև 20մ բարձր.; ծախս՝ ձևավոր թիթեղ՝ 112քմ; կռվածք՝ 5կգ; տանիքի մեխ՝ 2կգ/	100մ²	89.651
30		Կ12-278	Ջրհորդաների պատրաստում ցվիքով պատի ցինկապատ /գունավոր/ թիթեղով /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	100մ	107.153
31		Կ12-279	Ջրհորդաների պատրաստում ցվիքով կախովի ցինկապատ /գունավոր/ թիթեղով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	100մ	34.366
32		Կ12-279 կիրառ q=0.8	Ձնապաշպան արգելքների մոնտաժում առանց նյութի արժեքի	100մ	27.493
33		Կ12-280	Փոքրաչափ ծածկույթների իրականացում ցինկապատ /գունավոր/ թիթեղով /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	100մ²	96.367
34		8-195 Ծ1 q=+22,6	Ջրահեռացման ցինկ.թիթեղից Φ100-150մմ խողովակների տեղադրում քարե կամ թեթև բետոնե պատերին /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	100մ	96.629
35		Կ16-191 կիրառ.	Ջրթափ ձագարի տեղադրում առանց նյութի արժեքի	հատ	1.851
36		Կ10-71	Ձեղնահարկի լուսամուտի տեղադրում /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	հատ	8.279
37		Կ9-33 կիրառ	Տանիքի մետաղական կառուցատարրերի՝ կմախքի և կավարամածի հավաքակցում առանց նյութերի արժեքի /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	տ	87.785
38		Կ33-82 կիրառ.	Մետաղական էլեմենտների ներկում 2 շերտ /ծախս՝ նիտրոներկ՝ 9կգ; լուծիչ՝ 1կգ/	տ	3.235
39		Կ10-22	Ճակտոնների պատրաստում, (տանիքի ճակատների երեսապատում տախտակով) /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	մ²	0.944
40		Կ10-23	Քիվերի պատրաստում (երեսապատում տախտակով) /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	մ²	1.761
41		Կ10-206 38-3 կիրառ	Փայտե պատրաստվածքների մշակում հականեխիչ լուծույթով, /ծախսը՝ համաձայն չափորոշիչների և պատվիրատուի պահանջի/ առանց նյութերի արժեքի	100մ²	5.451
42		ՀՆ-ԼԺ6-1-5 կիրառ	Ամրանային պողպատից շինվացքների, ցանցերի, ներդիր էլեմենտների պատրաստում և տեղադրում բետոնե կառուցատարրերի կաղապարամածների մեջ առանց նյութերի արժեքի	տ	44.84

43		Կ6-309	Ծանր Վ7,5; 12,5;15;20;22,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ծախսը՝ խիճ 0,8խմ; ջուր 0,21խմ, ավազ 0,58;0,57;0,53;0,5;0,47 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/ 214;235;286;332; 382 կգ/	մ³	5.257
44		Կ6-318 կիրառ	Թեթև Վ5;7,5;12,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ծախսը՝ խիճ (ծավալային կշիռը մինչև 1500կգ/խմ) 0,89խմ; ջուր 0,32խմ, ավազ (ծավալային կշիռը մինչև 1500կգ/խմ) 0,54 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/255;286;317 կգ/	մ³	4.839
45		Կ6-336 կիրառ	Ցեմենտային/ցեմենտակրային/ շաղախի Վ7,5; 12,5;15 դասի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ծախսը՝ ավազ 1,21; 1,16; 1,12 խմ; ցեմենտ Մ400 դասի/ 304;416;499 կգ, ջուր 0,32խմ,/	մ³	4.335
			Նյութեր, պատրաստվածքներ և սարքավորումներ /արժեքը/		
46		իտ	Լիթոիդային ավազ, 0-5մմ /արժեքը/	մ³	2.694
47		իտ	Ցեմենտ Մ-400 (CEM-II/A-P, 42,5N) /արժեքը/	տ	56.122
48		իտ	Գլոցվածք (ամրալար) A-I Ø=6,5÷10մմ /արժեքը, Ռուսաստան/	տ	463.566
49		իտ	Բիտում-կաուչուկային խոնավամեկուսիչ ծածկույթ /քսանյութ/ (Polycoat RBE Ծախսը՝ 0,25 - 1լ/մ² /1 շերտին Տարա՝ 20լ, 200լ) /արժեքը/	լ	1.303
50		իտ	Պողպատե ուղղանկյուն կտրվածքի խողովակներ /արժեքը/	տ	556.858
51		իտ	Պողպատե անկյունակներ /արժեքը/	տ	617.55
52		իտ	Պողպատե խողովակներ տարբեր չափի /արժեքը/	տ	520.626
53		իտ	Հեղույս մանեկ /արժեքը/	կգ	1.347
54		իտ	Պտուտակ, ինքնաշաղափիչ /արժեքը/	կգ	1.347
55		իտ	Մեխ շինարարական, 20÷40մմ չափի /արժեքը/	կգ	0.79
56		իտ	Մեխ շինարարական, 50÷150մմ չափի /արժեքը/	կգ	0.562
57		իտ	Մեխ տանիքային /արժեքը/	կգ	1.01
58		իտ	Փայտանյութ /արժեքը/	մ³	190.814
59		իտ	Իզոգամ 4մմ հաստ. /արժեքը/	մ²	1.481
60		իտ	Իզոգամ փայլաթիթեղով 4մմ հաստ /արժեքը/	մ²	1.593
61		իտ	Գազ, պրոպան/բուտան /արժեքը/	կգ	0.58
62		իտ	Լուծիչ /արժեքը/	կգ	1.44
63		իտ	Նիտրոէմալ սպիտակ НЦ-132 /արժեքը/	կգ	1.888
64		իտ	Ներկ սուրիկ /արժեքը/	կգ	1.627
65		իտ	Ներկ հակակոռոզիոն կարմրակարիչ /արժեքը/	կգ	0.952
66		իտ	Կռվածք /արժեքը/	կգ	1.16

67		իտ	Մետաղական ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ. /արժեքը/	մ²	2.784
68		իտ	Մետաղական ցինկապատ թիթեղ 0,55մմ հաստ. /արժեքը/	մ²	2.992
69		իտ	Մետաղական ցինկապատ թիթեղ 0,6մմ հաստ. /արժեքը/	մ²	3.423
70		իտ	Մետաղական ցինկապատ թիթեղ 0,7մմ հաստ. /արժեքը/	մ²	3.921
71		իտ	Մետաղական ցինկապատ թիթեղ 0,8մմ հաստ. /արժեքը/	մ²	4.497
72		իտ	Մետաղական ցինկապատ, թիթեղ, գունավոր, 0,5մմ հաստ. /արժեքը/	մ²	4.266
73		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-25-0,5մմ /արժեքը/	մ²	3.004
74		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-25-0,55մմ /արժեքը/	մ²	3.225
75		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-25-0,6մմ /արժեքը/	մ²	3.573
76		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-25-0,7մմ /արժեքը/	մ²	3.997
77		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-21-0,5մմ /արժեքը/	մ²	3.194
78		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-21-0,55մմ /արժեքը/	մ²	3.359
79		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-21-0,6մմ /արժեքը/	մ²	3.726
80		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ КП-18-0,55մմ /արժեքը/	մ²	3.194
81		իտ	Մետաղական պրոֆիլավոր ցինկապատ ներկված թիթեղ КП-18-0,5մմ /արժեքը/	մ²	4.624
82		իտ	Մետաղակղմինդր ցինկապատ, "Կասկադ", ներկված, 0,5մմ հաստ. /արժեքը/	մ²	4.737
83		իտ	Ջրհորդան ուղղանկյուն, ցինկապատ /արժեքը/	գծմ	1.722
84		իտ	Ջրհորդան ուղղանկյուն, գունավոր /արժեքը/	գծմ	2.169
85		իտ	Արգելք ձնպաշտպան, 2000մմ, գունավոր /արժեքը/	հատ	7.409
86		իտ	Փական ուղղանկյուն ջրհորդանի, ցինկապատ /արժեքը/	հատ	0.655
87		իտ	Փական ուղղանկյուն ջրհորդանի, գունավոր /արժեքը/	հատ	0.663
88		իտ	Կախիչի ամրակ կիսակլոր ջրհորդանի, գունավոր /արժեքը/	հատ	0.43
89		իտ	Ձագար կլոր ջրատարով, Ø-100մմ, ցինկապատ /արժեքը/	հատ	1.964
90		իտ	Ձագար ուղղանկյուն ջրատարով, գունավոր /արժեքը/	հատ	3.218
91		իտ	Խողովակ կլոր, ջրատար, Ø-100մմ, ցինկապատ /արժեքը/	գծմ	1.722
92		իտ	Խողովակ ուղղանկյուն, ջրատար, գունավոր /արժեքը/	գծմ	2.395

93		հտ	Արմունկ կլոր ջրատար խողովակի, ցինկապատ /արժեքը/	հատ	1.366
94		հտ	Արմունկ ուղղանկյուն ջրատար խողովակի, գունավոր /արժեքը/	հատ	1.366
95		հտ	Պիպ գագաթնածածկի ցինկապատ (150x150) 2500մմ, /արժեքը/	հատ	4.452
96		հտ	Պիպ գագաթնածածկի ցինկապատ (200x200) 2500մմ, /արժեքը/	հատ	6.547
Ընդամենը՝					**3986.649**
ԱԱՀ 20%					**797.330**
ԸՆԴԱՄԵՆԸ՝					**4783.979**

Հ/հ	Մարզ	գործակից	Հ/հ	Մարզ	գործակից			
Ն		***1.0000***	6	Գեղարքունիք	1.0898			
1	Երևան	1.0572	7	Վայոց Ձոր	1.0761			
2	Արմավիր	1.0615	8	Լոռի	1.0893			
3	Արարատ	1.07	9	Շիրակ	1.088			
4	Արագածոտն	1.0679	10	Սյունիք	1.129			
5	Կոտայք	1.0657	11	Տավուշ	1.132			

Ծանոթություն.

1. Սույն աշխատանքների համար պլանավորված առավելագույն գինը կազմում է **100,000,000** ՀՀ դրամ:
2. Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները ընդունել 2018թ-ի թիվ 09 ինֆորմացիոն տեղեկագրից, դրանց բացակայության դեպքում՝ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ << Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը>> հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ կիրառելով պայմանագրի գործակիցը:
3. Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի գործակիցները պետք է կիրառել համաձայն վերը նշված մարզային գործակիցների:
4. Շինանյութերն ու սարքավորումները ձեռք են բերվում կապալառու կազմակերպության կողմից՝ բացառապես շինարարական աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՉԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արալպլաստ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԼԼԱՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԱԾՁԲ-10/2-1 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Տանիքների վերանորոգման աշխատանքների						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր քանակը	ընդհանուր առավելագույն գինը՝ ՀՀ դրամ	կատարման	
					հասցեն	ժամկետը
1	45261124/1	դրամ	1	100,000,000	ՀՀ ՊՆ զորամասեր	3-րդ և 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ.

Աշխատանքներն իրականացվելու են նախատեսված առավելագույն գնի սահմաններում՝ համաձայն ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության հայտերի՝ հաստատված թերությունների ակտերի և համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ԴԱՎԹՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արալպլաստ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԼԵԱՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՇՁԲ-10/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքների									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին, ըստ ամիսների, այդ թվում՝						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25-ը	Ընդամենը
1	45261124/1	Տանիքների վերանորոգման աշխատանքներ	80,000,000	80,000,000	80,000,000	100,000,000	100,000,000	100,000,000	100,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արալպլաստ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԼԼԱՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 4
N ԲՄԱԾՁԲ-10/2-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ԲՄԱԾՁԲ-10/2-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն